

ՍԻՐԱԾ

Լ Ա Թ Ի Փ Ե

891.99

Ա - 55

-6 NOV 2011

891.99
Ա-55 *այ*

ՍԻՐԱՍ

Լ Ա Թ Ի Ֆ Ե

ԱՐԵՎԵԼՑԱՆ ՏԵՍԻԼ



ՊԵՏՈՒԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1985

31 JUL 2013

53306

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ՝
ԶԳԱՅՈՒՄՆԵՐՈՎ ԼԵՑՈՒՆ
ԻՄ ՊԱՅՏԱՌ ԲԱՐԵԿԱՄՈՒՀՈՒՆ

Պատ. Խմբ. [REDACTED]
Տեխ. Խորագիր [REDACTED]
Սրբազրիչ Ռ. Գասարյան
Փ
Պետհրատի տպարան
Դեմքլիս 265, Պատվեր 1009,
Հրատ. 3418, Տիբառ 3000

Փ



1949
42

•Ինչո՞ւ են նրանք պարում,
և ինչո՞ւ նրանք բոլորովին
ուրախ չեն, յերբ ողբում
են:

I

Յերբ հինավուրց մզկիթի մինարեյի
րուրակ շրթունքին թառած մոլլայի
րերանից թուավ աղանի վերջին Հան-
գը, յերբ հավատացյալ իսլամները
հինայած մորուքները շոյելով մզկիթ
մոռան, մենակ Սարգար խանն եր,
վոր այդ որը վո՛չ մոլլայի աղանն
ուղեց լսել, վո՛չ ել վորևե ուշադրու-
թյուն դարձրեց մզկիթն շտապող հա-

վատացյալների վրա։ Նա մոլեգնած հայացքով, ակնակապիճներից դուրս ցցած աչքերով, կատաղորեն անց ու դարձում եր իր հարեմի ընդարձակ դաշտին։

Այնտեղ շարեշար կանգնած եյին ութը կանայք։ 15 տարվա ընթացքում նա մեկ-մեկ ջոկել եր նրանցից յուրաքանչյուրին, ջոկել եր կրքով, ջոկել եր նախանձով, ջոկել եր արեգեցու կառկածամտությամբ և այժմ նա մեկ-մեկ նայում եր նրանց վրա իբրև իրերի, վորոնք իր անձեռնմխելիք ու անկապտելի սեփականությունն եյին, իբրև եյակների, վորոնք պարտավոր եյին հասկանալ իր մեն մի շարժումի իմաստը, վորոնք ինչպես ծառի տերեկները շարժվում են քամու հոսանքի ուղղությամբ, այնպես ել այդ արարածները պարտավոր եյին շարժվել իր ցանկացած ուղղությամբ։

Յեն խոնարհած գլուխներով, սակայն աչքերի զգաստ թարթումով ու-

թը կանայք լուռ հետեւյում եյին Սարդարի մոլեգնած անց ու դարձին... Ութը կանայք... Սարդարը քայլում ու հաշվում եր մեկ... յերկու... մինչեւ ութը... ութը կին, ութը հրաշք մեկի աչքերը վասման խարույկ եյին, վոր կարող եյին լույս տալ դիշերվա խավարում, մեկինը կապույտ, ինչպես իրանի հնամենի ծովն եր, մեկը ճարապիկ եր ինչպես վիթ, մյուսը ճկուն ու թեթեւվ վորպիս յիթեր, մեկի պարանոցը խոյանք ուներ կարապի նման, մյուսինը լուսածին մարմար եր, վորի մեջ կարտացուկը աշխարհն իր բյուր հրաշքով, մեկի բերանը նորաբորբոշ վարդենի եր, մյուսինն արդեն բացված մանուշակ։ և բոլորի վրայից բուրում ել ջեննաթի անմահական հոտը։

Սարդարը նայում եր կանանց և ինչքան շատ եր նայում, այնքան ահաղնանում եր նրա կատաղությունը. ինչքան հրապուրիչ, դուրեկան եյին այդ ութը կանայք, այնքան անրոնա-

դատելի ու մոլեկին եր դառնում նրա
կատաղությունը :

— Ո՞ւր ե Լաթիֆեն, ինչպես փա-
խավ, ո՞վ ողնեց նրան, հա՞ , գո՞ւ
չքիսե՞ս, գո՞ւ ել, գո՞ւ ել, գո՞ւ
ել... ա՞հ, հասկանում եմ... գուք
բոլորդ վոխ ունեք իմ գեմ... գուք
ամեն մեկդ ձեր սրտում մի սիրե-
կանի սպասիեր եք պահում... վայ թե
մի ճեղքվածք եք տեսել դռան արան-
քում... խոկույն, կատավի սես ճկուն
կդառնա ձեր մարմինը, ու հայ-
դե'...

Խոսում եր Սարդարը մոլեզնա,
մերթ կանանցից մեկին, մերթ մյու-
սին դիմելով, ապա կատաղորեն, նո-
րից հետ ու առաջ չարժվում զահ-
լինում :

❖ Յերկու որ առաջ հարեմից փախել
եր նրա իններոդ կինը, Լաթիֆեն.
Նու սրբենից մասաղահստան ու ամենից
սքանչելին եր. չորս ամիս տասնըվեց
ամբար աղջիկը դիմադրել եր Սարդա-
րի քմահաճ, կրքոտ պահանջներին ու

վերջը վախել եր... թե ինչ ուղղու-
թյամբ՝ Սարդարը չեր կարողացել
զարդել: Նա անմիջապես գլխաւել
եր տվել կանանցի սլահապան յերեք
ներքինիներին, հետո զանաղան ուղ-
ղությամբ ուղարկել եր հետախոռոշ-
ներ, բայց բոլորն ել ձեռնունայն եյին
վերադարձել:

Ահա այս վեպին եր, վոր մոլեզ-
նության ասմօճան կատաղեցրել եր
Սարդարին և այդ եր սպասառը, վոր
նա կատաղել եր նաև իր մնացած ու-
թը կանանց վեմ... Այժմ նա չեր
հավատում նրանցից և վոչ մեկի
սիրուն. նրանց բոլորի գուրգուրան-
քը կեզծ, բանալըսուիկ, շողոքորթ և
առերես եյին թվում Սարդարին և այդ
մտքից նա ավելի ու ավելի յեր դա-
զագում...

Մրեվելյան Հարեմում սեր չկա... ✓
Սեր չի կարող լինել այստեղ, ուր
տիրապետում է անսանձ բռնությունն
ու անասնական կիրքը... Սերը,
բնության այդ սքանչելի պարզել

աճում ու ծաղկում եր հյուղերում,
յողովրդի ծցում, վորը սակայն
թռչնում ու խամրում եր բանավորի
հարվածի տակ... Այժմ Սարգարը
կուղեր մեկին, վոր ամբողջովին
նվիրվեր իրեն, նվիրվեր վոչ թէ
վախին ու բանությանը զիջելով, այլ
սրտանց, ամբողջ հոգով. նա մեկ-
մեկ նայեց իր ութը կանանց և չդը-
տավ նրանց մեջ վոչ մեկին, վոր
կարողանար անկեղծ լինել իր հետ...

Յեկ Սարդարը մի վերջին անգամ
գնաց յեկալ դահլիճում, ապա ծա-
լարատիկ նատեց թախտին և թաղ-
բեհը ձեռքից ձեռք դցելով խոսեց.

— Սիմիզա՛ր, մոտեցիր ինձ:

Կանանց խմբից առաջացավ սեվա-
հեր, ածուխից ել վառվուն աչքե-
րով մի թեթևաքայլ կին. մետաքսի
նուրբ հյուսվածքի զգեստը հաղիվ
ծածկում եր նրա կուրծքը՝ բաց թող-
նելով ամբողջ նրա ձյունավայլ վո-
րովայնը, վորը Սողոմոն իմաստումն
ըմպելիքով լեցուն բոլորակ թասի ու

չուշանով պատաժ ցորենի շեղջին պի-
տի նմանեցներ՝ համեմատելով հի-
նավուրց Յերուսաղեմի աղջկիների
հետ:

Սիմիզարը հասնելով Սարգարին
ծունկ իջավ ու խոնարհ գլուխ
տարով համբուրեց տիրոջ քղանցքը:

Սարդարը ձեռքը տարավ, չոյեց
Սիմիզարի դունչը, նայեց նրա վառ-
վոռն աչքերին և դողաց ամբողջ
մարմնով:

— Դու ո՞ւմն ես սիրում, — հարց-
րեց Սարդարը:

— Վերեվ աստված, ներքեվը իմ
տերը, իմ խանը, վորի ստրուկն ու
կամակատարն եմ յես, վորի փեշը
համարձակվում եմ համբուրել, — ա-
սաց Սիմիզարը ու նորից համբուրեց
Սարդարի զգեստի քղանցքը:

Սարդարը մի պահ չոյեց մորու-
քը, դուխուր տարուրերեց, ապա հեր-
թով կանչեց մյուս կանանց, բոլո-
րին ավեց միենույն հարցը և ըս-
տացավ միենույն պատասխանը:

— Վո՞չ, վո՞չ, — բացականչեց
Սարգարը, — նա ել, Լաթիֆեն ել,
այդպես, ձիւս այդպես եր յերգ-
վում, բայց փախավ, փախավ...
դուք բոլոր սերտած բոտեր եք
կրկնում... չե՞յ, ներքինի Սահիբ,
չե՞յ Սահիբ...

Ներքինին փութկոտ, կատվային
չարժումներով յեկավ կանոնեց կա-
նոնց զիլավերելովամ:

— Սահիբ, — խոսեց խանը, — կը-
տանես, այս ութին ել կտեղավորես
իմ ապարանքի յետեվի սենյակում.
անմիջակես լուսամռւտներին ամենա-
ամուր շաղախով քարեր շարել կտաս,
այնպիս վոր արեվի վոչ մի ճառա-
զայթ չընկնի այդ սենյակում. վեց
ամիս նրանք պիտի մնան այնտեղ,
ու վեց ամիս արեվը չպիտի ծագի
նրանց համար...

— Քո խոսքը որենք ե, տեր, — այ-
սորվանից մինչև վեց ամիս այլևս
արեվը չի ծագելու ութը խանամնե-
րի համար:

— Իսկ դուքք ի՞նչ կասեք, խանում-
ներ, — հարցրեց Սարգարը:

— Քո խոսքը որենք ե, տեր, — ա-
ռաջինը խոսեց Սիմիզարը, — այսոր-
վանից այլևս արեվը չի ծագում:

Յեվ նույնը կրկնեցին Սիմիզարի
յետեվից մյուս յոթը կանայք:

Ու յերբ Սարգարը գոհ իր վճուից
նորից թաղբեհը ձեռք առնելով վոս-
քի յելավ ու սկսեց անց ու դարձ
անել սենյակում՝ ներքինի Սահիբը
ութը կանանց առջեվին առած տարապ-
ղեալի մատնանշված սենյակը՝ Սար-
գարի վճիռն իրագործելու...



սունացող տանձն ու դեղձը, ապա ցերեկլա արեվով ոծված խաղողի գունագեղ վողկույզներն, այժմ արելի հաճելի ու դուրեկան տեսք ելին ստացել:

Սարդարն իջակ այդիների արահետը, չնչեց թարմ ողը, զգաց հովիտի բուրմունքը, բայց չչիջեց նրա կատաղությունը... Նա անսահման նվաստացած եր զգում իրեն Լաթիֆեյի վարմունքից... Արեվելյան բռնակալի վոխակալությամբ նա կոխում, տրորումեր վոտքի տակ ընկած յերին հրանդ ծաղիկները, ծաղիկներ, վորոնց վրա ամեն որ կաթում եր բռնադրոված յերկոյան զովացուցիչ հովը. Արարատի ձյունափայլ գաղաթից յեկող մեղմ քամին միացած Զանգույց արձակված թարմացուցիչ չնչին, Զանգույի հովիտը լցրել եր հաճելի բուրմունքով: Յեկ այդ բուրմունքը մանաւլանդ հաճելի յեր, վորովհետև Զանգույի յերկու ափերին փոված այդիներում հա-

II

Մորդարը դուրս յելավ իր ապարան քից և իջակ այն հովիտը, ուր հնամենի Զանգուն զարավոր կատաղությամբ գալիս իր կոհափները փշրում եր ժեռառաժի ու վհատ մրմունչով քշվում եր առաջ... Յերեկվա տապին հաջորդել եր յերեկոյան զովացուցիչ հովը. Արարատի ձյունափայլ գաղաթից յեկող մեղմ քամին միացած Զանգույց արձակված թարմացուցիչ չնչին, Զանգույի հովիտը լցրել եր հաճելի բուրմունքով: Յեկ այդ բուրմունքը մանաւլանդ հաճելի յեր, վորովհետև Զանգույի յերկու ափերին փոված այդիներում հա-

Հայացք, ամեն մի խոսք, վարի մէջ
անհաճող չէշտ կար իրեն համար :

Այս մտորումներով նա մի քանի
անդամ գնաց ու յեկալ հովիտի յեր-
կարությամբ, շոշափեց հնամենի հաս-
տաբեստ ծառերի լունը և ինքն ել
չգիտեր թե ինչով պիտի վերջանար
որը... վերադառնալ տո՞ւն, բայց
տունը նրա աչքին սեվ ոճ եր դար-
ձել, Լաթիֆին պղծել եր նրա շեմքը.
Հարկալոր եր մի այնպիսի արտա-
կարգ բան, վոր մեղմեր նրա կատա-
ղությունը, վոր հանգստացներ նրա
լորբերքած արյունը և նա մերթ լա-
զուր յերկնքին եր նայում, մերթ
ավագող ծառերին, և ամենից շատ
աղմկող Զանդույին... Զանդույ,
ի՞նչ կար նրա ծալքերում, ինչո՞ւ յեր
նա այդպես մոլեգնած առաջ լնթա-
նում... և յերբ նա խորհրդածելով
Զանդուի մասին կրկին հայացքը հա-
ռեց դեպի գետի հոսանքը, ուր
փրփրաղեղ մի ալիք սանձից արձակ-
ված ամենի ցուլի նման առաջ եր լի-

թանում՝ նա մի պահ կանգնեց. ալի-
քը փշրվեց զարնվելով ափից դեպի
գետի խորքը ձգված ժայռի մի մեծ
բեկորի վրա և հենց այդ ժայռի
ցցունքին յերեվաց մի աղջիկ: Թվաց
թե զջիկը ծնվեց փրփուրից, թվաց
թե ալիքը դուրս նետելով աղջկան
հանդարտվեց և չիշավ նրա քիչ ա-
ռաջվա մոլեգնությունը: Սարդարը
յերեք քայլ առաջ անցավ և կանգնեց.
այսո՛ աղջիկ եր... աղջիկ, բայց այդ
ինչ յերկնային լույս եր, վոր պա-
րուել եր աղջկա դեմքը, այդ ինչ
լուսածին ճերմակություն, այդ ինչ
հուր հրաշք աչքեր այդ ինչ նազանի
շարժումնեղ. աղջկա ճեռքին յեղած
փոքրիկ կուժն ել թվում եր թե ա-
ռանձին փայլ ու հրապույր եր ստա-
յել. թրծած կավը արեվի վերջին չո-
ղերի տակ պապում եր ինչպես աղա-
մանդ, բայց գուցե դա աղջկա փայլն
եր, վոր անցել եր կուժին ու շրջա-
պատին և ամեն ինչ դարձրել չքնաղ
ու հրապուրիչ... փերի, զրից ծըն-
ված փերի, ահա, այս միտքն եր ան-



ցավ սնոտիապաշտ Սարդարի գլխով .
գուցե դա մարդարեցի պարզելն եր
իրեն , իր կորցրած Լաթիֆեյի փոխա-
րեն . և ի՞նչ Լաթիֆե կը հասներ
սրան . . . ահա ! , ահա ! , հիմա ամեն
ինչ վիտիվի , հիմա վերին նորից
ջուրը կընկնի , բայց այս անդամ ար-
դեն յերեղի Յեվայի հաղուստով ու
խայտալով ալիքների հետ առաջ կը-
սուրա՞ ամիեն թողնելով կայծակնա-
հար ու շփոթիած Սարդարին . . . Բայց
վո՞չ , աղջիկը փութով կուժը դեպի
գետն և յերկարում , ձեռքը դողում և ,
կուժը խաղում և ալիքների հետ ու չի
սուզվում ջրի մեջ . . . իսկ աղջիկն այն-
պէս շտապում և . . . յերջապես նա կու-
ժը դուրս և քաշում ալիքների միջից ,
դնում և ուսին ու վախիսրած վիթի
նման համարյա թռչկտելով անցնում
և այդիների միջով . . . Շարժվում և
աղջիկն առաջ և քիչ հեռու տեսնե-
լով այդիներում աշխատով յերկու այլ
աղջամարդու , կարծես հանդարտվում
և այս անդամ քայլում և համա-
չափ :

Յերկու աղամարդիկ , վոր տեսել են
աղջկան , ապա նաև նրա յետելից
դնացող Սարդարին լցվում են կատա-
ղությամբ , բայց վոչինչ անել չեն
կարող . . . նրանք գիտեն , վոր Սար-
դարն արդ բոսկելին գաղաղած գայլի
հոգեվիճակ և ապիսում և վտանգավոր
և նրան մոտենալ , կամ նույնիսկ վո-
րեւ ակնարկով համացնել , թէ իրենք
վորեւ հակակրանք ունեն Սարդարի
հանդեպ :

Նկատե՞ց արդյոք Սարդարը յերկու
տղամարդկանց , թվում և թի այո . . .
Բայց ինչ հոգ թի ովքեր են նրանք ,
չե՞ վոր ինքն և այս քաղաքի ու ըրջա-
պատի ամենակալ սերը , ո՞վ և այն
համարձակը , վոր պետք և իր առաջը
կանգնի . բայց աղջիկը նորից շտա-
պում և , անհնար և նրան հասնել . . .

— Սահի՞բ , — գառնում և Սարդարը
հեռվից իրեն մոտեցող ներքինուն ,
— Սահիբ , հետեւիր այս աղջկան , ի-
մացիր նրա բնակավայրը և ինձ շու-
տով լուր բեր . . .

III

Մթնեց : Սարգարն ապրում է մըթնըշաղի տեսիլքի հրապույրով . . . բոված առաջ պետք ե կրկին տեսնել նրան . վո՛չ, վո՛չ միայն տեսնել, այս ունենալ իր մոտ, իր սեփական հարկի տակ, ճողովրած Լաթիֆեյի փոխարեն . . . Լաթիֆե' . . . բայց գեղեցիկ ու քաղցրահնչյուն ե այդ անունը նույնքան, ինչքան քաղցր ու գեղեցիկ ե ինքը այդ աղջիկը . . . Նա այդպես ել կկոչի այս նոր աղջկան . . .

Սահիբը վերադարձել է իր հետախուզությունից. Սահիբն ամեն բան գիտե . . . այս', հենց այս աղջկան նունն ել Լաթիֆե յի, վոր կա . . . այ-

դում յեղած յերկու տղամարդկանց մեջ մեկը՝ իրահիմը՝ աղջկա յեղբայրն ե, իսկ մյուսը՝ Մանսուրը քաղակով յերիտասարդը՝ աղջկա սիրահարը, հենց այս շաբաթ նա պիտի ամուսնանա Լաթիֆեյի հետ :

— Ամուսնանա՞ — բացականչում ե Սարգարը և կրծտացնելով ատամները հաղնում ե յերկանցի վաճառականի զգեստ և Սահիբի հետ դուրս ե գնում տանից . . . Նրանք անցնում են Յերեկանի ոճապառյա փողոցներով, կավեց ցածրաշեն անեղի միջով, վորոնց նեղլիկ լուսամուսներից հաղիկ առկայժում ե թույլ ու նվազ լույսը . . . Գնում ե Սարգարը, հզոր խանը փողոցներով, գնում ե ավելացող հուզումով, գնում ե լայն, լայն բացած աչքերով, վորոնք կիսախալար փողոցներում փայլում են, ինչպես գայլի աչքերը խավար անտառի խորքից :

— Ահա! — ասում ե Սահիբը, ահա այս լուսամուտի յետեկում ե զորնվում Լաթիֆեն :

Սարդարը կանգ և առնում . . . փողոցում այլեւս անց ու դարձող չկա...
բայց այս ինչ անմահական ձայն և,
այս ինչ ջեննաթային մնղեղի . . . Սա
հիբը վստայունով առաջ և անցնում
և քիչ հետո նույն վստայունով հետ
գաւհն . . .

— Նա յե, տեր իմ, նա յե թառի
վրա նվազում ու յերգում . . .

Լաթիֆեյի ձա՞յնը . . . հետզետե խո-
րացող խավարի մեջ ալիքավորվում
և ու տարածվում Լաթիֆեյի ձայնը,
տարածվում նրբին դայլայլունով,
տարածվում քնքուշ, շոյող ու հմայիչ
յելելեջներով, թվում և թե ամբողջ
ըրջապատը լուել և՝ ունինդրելու Լա-
թիֆեյի այնքան քաղցրահնչյուն մե-
ղեղուն . . . Յել Սարդարի հոգին լըց-
վում և տիրողի քմահամ ու բոնակալի
անհատում քինախնդությամբ դե-
պի այն ամենը, ինչ պատվալ և իր
ու Լաթիֆեյի միջև. քանդել, վոչըն-
չացնել այդ ամբողջ պատվարը . . .
Մեկ Լաթիֆեն փախալ, այժմ կա
մյուսը . . . վոչնչացնել այն բոլոր կա-

պերը, վոր այս նոր Լաթիֆեյին
կապում և դրսի հետ, աշխարհի
հետ . . . Միայն ու միայն իր համար
ովհոտի յերդի ու նվազի Լաթիֆեն,
միայն ու միայն ինքը պիտի ունելընդ-
րի նրան, և վոչ վոք, վոչ վոք չովի-
տի համարձակվի լաել նրան . . . Պետք
և խցել բոլոր ականջները, պետք և
փակել թուոր սրտերի դռները, վո-
րոնք բարախում են Լաթիֆեյի հա-
մար . . .

Լոեց նվազը . . . թվաց թե ամեն
ինչ մռայլվեց ըրջապատում. այժմ
իրոք վոր խավար ե, այժմ ամեն ինչ
ձնչող և ու անհրապաւյր:

Սարդարը շոտպում է իր ապարան-
քը . . . մի քանի բուղեյում ապարանքի
ծառաները, ապա նաև Փարրահները
դենք ու զրահը կապած, պատրաստ
սպասում են Սարդարի հրամանին . . .
թվում և թե խանը սրատրաստվում ե
պատերազմի, թվում և թե ինչ վոր
թշնամի յե ներխուժել յերկրի սահ-
մանները . . . Սարդարը կանչում ե Փար-

բաշների ղեկավարին ու ինչ վոր հրա-
մաններ ե տալիս...

— Ամեն ինչ կլինի մեր տիրոջ հրա-
մանի ու ցանկության համաձայն, —
առում ե Փարբաշների ղեկավարը ու
զինված խումբը շարժվում ե առաջ:

Տիրոջ՝ Սարդարի հրամանն եր Լա-
թիփեյին վողջ ու առողջ իր թառով
հանդերձ բերել իր ապարանքը, իր իվ
իրեն կին... Յեկ մեկ ժամից հետո ար
դեն ամեն ինչ կատարված եր Սար-
դարի հրամանի ու ցանկության հա-
մաձայն:

Լաթիփեն ինքն իր թառով, գլխա-
հակ, արցունքոտ աչքերով կանգնած
եր Սարդարի առջեվ...



Սարդարը նայում եր Լաթիփեյին
և ըովե առ ըովե աղջիկը նոր ու նոր
հրապույր եր ստանում նրա աչքով։
այժմ Լաթիփեն շիկնել եր ու Շի-
րազի չքնաղահյուս վարդերի բույր
ստացել։ աչքերից իշած արցունքի
կաթիլները վաղորդյան ցողի պես
շիթ առ շիթ իջնում եյին նրա այտերն
ի վայր և ավելի դրավիչ դարձնաւմ
նրան։ Սարդարը մի քանի քայլ ա-
րավ դեպի մատաղահաս աղջիկն ու
կանդ առավ։ նա վախենում եր, չլի-
նի թե հանկարծ չքանա արդ տեսիլ-
քը, քանի վոր տեսիլքը կարող եր
միայն այդքան հրապուրիչ, այդքան

սքանչելի լինել... թվում եր թե աղ-
ջիկը աննյութ, անմարմին մի եյակ
է, վոր ջեննաթից իջել և միայն ու
միայն մի բոսկ վառելու Սարդարի
սրառմ մարգարելի խռոտացած հան-
դերձյալ կյանքի կարոտը և չքանա-
լու... բայց և այնպես, հետզետե,
ցանկությունը, աղջկան մոտիկից ըղ-
դալու ցանկությունը ահագնանում
եր բոցավառվող հրդեհի նման և
Սարդարը մի վճռական քայլով գըր-
կեց աղջկա ճկուն իրանը...

— Յերդիր, Լաթիֆե, յերդիր ինձ
համար, յերդիր ու նվազիը քո այն
անմահական յեղանակը:

Լաթիֆեն կատաղորեն շպրտում ե
ձեռքից թառը և աշխատում ե աղատ-
վել Սարդարի գլուխից:

— Մի համառիր, Լաթիֆե, այս ամ-
բողջ ապարանքը քոնը կլինի, դրսի
հետ դու այլևս գործ չունիս. այն-
տեղ վոչ վոք չկա:

— Այնտեղ կա Մանսուրը, կա Իբ-
րահիմը, կա Զանդուն... Յես սի-

րում եմ ջուրն ու արեվը, յս չենց
հիմա պիտի գնամ, յես ողետք ե ա-
ռանդութը չուտ զարթնեմ, մոր ջուր բե-
րեմ Զանդուից :

— Քեզ համար ջուր կրերեն իմ
ծառանկերը. իսկ Մանսուրի և Իբրա-
հիմի մասին մոռացիր. նրանք կեղ-
առու ու վոջոտ մշակներ են, վորոնք
ոյետք ե զիշեր ու ցերեկ աշխատեն,
իսկ դու պիտի ապրես ու զվարճա-
նառ. իսկ Զանդուն, շա՞տ ես սիրում
Զանդուն...

— Շա՞տ, շա՞տ, և Զանդուն, և
Մանսուրին, և Իբրահիմին:

— Յես քեզ ասի, վոր մոռացիր Ման-
սուրի ու Իբրահիմի մասին, իսկ Զան-
դուն... Զանդուն, առավոտը կը-
հրամայեմ, վոր Զանդուն ընթեն իմ
ապարանքը...

— Զանդուն... քո ապարանքը...

— Ի՞նչ կա զարմանալու... յես եմ
ուլքն ու իշխանը և իմ խոսքը որենք
ե... Զանդուն շատ ջուր ունի... ա-
ռու հանել կտամ... այստեղ ապա-

բանքի ընդարձակ բակում, մարդկանց
աչքերից հեռու մի մեծ ավազան կը-
սարքեմ, չորս բոլորը ծաղիկներ
կտնկեմ, ծաղիկներ, գրախտային ծա-
ղիկներ և դու ինչպես փերի կլողանաս
ալապանի մեջ, կհոտուես ծաղիկնե-
րի բույրը, ապա կնվազես ու կեր-
դես՝ իսկ յես կդիտեմ թե դու ինչ-
պես քո ասուլածային մարմնով կխա-
ղաս ալիքների հետ, կդիտեմ քո ուսն-
դերը, վորոնք վարդերից ու չուշան-
հերից անուշ հոտը ներս կծծեն, իսկ
յես կծծեմ քո ուսների ու ըրթունք-
ների հոտը, դու կնվազես ու կերգես,
իսկ յես կլսեմ ու կոքանչանամ քո
ձայնով, քո մատների կախարդիչ իսա-
դով...

— Բայց այնուամենայնիվ յես սի-
րում եմ Մանսուրին ու իբրահիմին:

— Դու այլևս չես տեսնի Մանսու-
րին ու իբրահիմին... նրանք կաշմա-
տեն քո յերջանկության համար...
նրանք լուսածաղից կաշխատեն Զան-
դուի ակունքում և իմ մյուս բազմա-

թիվ ծառաների ու Փահլաների հետ
ջուրը կհասցնեն ավազանին, վոր դու
ջրի պես պայծառ ու ուրախ լինեն,
վոր դու հասկանաս թե ինչ հրաշք-
ներ կարող ե անել ամենակարող Սար-
դարը, վոր դու հնագանդ լինեն քո
տիրոջ հրամանին...

Լաթիֆեն գլուխը հետ գցեց, չըք-
նաղ մազերը թափալ հետ ընկան,
գլորվեցին նրա ուսերի վրա և նա
դրաց, վոր անզոր ե գիմադրել բըռ-
նակալի կամքին, բայց իր սելա-
թույլ աչքերում, դրսի, աղաս կյան-
քի կայծը դեռ փայլվելում եր... նա
լոել իր իրենից առաջ յեկած Լաթի-
ֆեյի պամությունը և իրեն որո-
րում եր այն չքնաղ յերազավ, վոր
մեկ որ ինքն ել աղաս կլինի, ինքն
ել իր Մանսուրի զըկում կհանդսուաց-
նի իր տրոփող սիրտը...

Սարդարը կարծես հասկացավ աղ-
ջկա քբամնջոցի իմաստը... վո՞չ, —
վճռեց նա, — վո՞չ մի ճանապարհ չի
լինի գեղի դուրս... Մանսուրին ը-

իբրահիմին այն ձեռվլ պիտի աշխատ
տեցնել ջրանցքի վրա, վոր մինչև
ջուրը տեղը հասնի նրանք այլևս դա-
դարեն ապրելուց... իսկ ավաղանը,
ավաղանը, ո՞չ, այդ նրա յերազն
էր... այդ միտքը ծագել էր նրա դրւ-
խում հենց այն պահին, յերբ փըր-
փրադեղ ալիքը ջարդվեց ժայռի վրա
և յերեաց Լաթիֆեն... ինքը յենթա-
դրում էր թե աճա՛ ուր վոր և աղջի-
կըն իբրեւ տեսիլ ջուրը կընկնի ու
կանհայտանա, բայց այդ տեղի չու-
նեցավ, այժմ Լաթիֆեն կլողանա իր
աչքի առջև, իր համար, միայն իր
համար... կա՞ ավելի հրապուրիչ
պատկեր, քան չքնաղագեղ Լաթիֆե-
յին, ջեննաթի այդ փերուն տեսնել ա-
լիքների հետ խաղալիս... Զե՞ վոր
արդարես և գրված հեքիաթներում և
ո՞վ և խանդարում Սարդարին այդ
չքնաղ հեքիաթը իրականություն
դարձնել և թող աշխարհն խմանա, թե
ինչ կարող ե անել Սարդարը, յերբ
նա ուղում ե նվաճել զդայական հա-
ճայքի ամենարարձր դադաթը...

Յեւ Սարդարի հրամանով Փարլաց-
ները այդիներից, տներից, գյուղե-
թյուններուն Հալաքեցին-մտրակի Հար-
յաւը ու հարյուր մարդիկ. Հավաքե-
ցին խանության բոլոր ազգեր Հպա-
տակներից. Հալաքեցին պարսիկներ,
հայեր, թուրքեր, քուրդեր, ասորի-
ներ... Կանդ առաջ կյանքն ամեն
տեղ. ամեն ընտանիքում բարձ-
րացավ վոզր ու կոծ... Ամենքը
վոզրացին իրենց լաւնատանը կյան-
քին հասած այս նոր դժբախտու-
թյունը... Հալաքեցին մտրակի Հար-
յածներով, Հավաքեցին այնպես,
ինչպես հնադարյան տերը Հալաքում

ե իր ստրուկներին... Վո՛չ մի ա-
զերսանք չըսեց ու չանսաց Սարդարը
և ամենից առաջ բերին Լաթիֆեյի
յեղբորը՝ իբրահիմին, նորափեսու-
թյան պատրաստվող Մանսուրին ու
նրանց յերկար տարիների հարկան
կարապետին...

Առաջին գիշերը Մանսուրն ու իր-
ամիմը փորձ ելին արել գիմաղը-
րել Փարրաշներին, թույլ չոտավ։
Վոր նրանք Լաթիֆեյին տանեն
բայց քսան զինված Փարրաշների գի-
մաց վոչինչ չելին կարող անել նը-
րանք և մահվան սպառնալիքի տակ
հարկադրված ելին տեղի տալ բըռ-
նակալի քմահաճույքին։ Հետեւալ
որը նրանք խորհրդակցել ելին իրենց
սրտակից Կարապետի հետ և յեկել
այն յեղբակացության, վոր պետք եր
համբերել, համբերել, ու համբերու-
թյամբ նախապատրաստել Լաթիֆե-
յի փախուստը...

Բայց մի՞թե սիրած սիրտը գիտե
համբերել։ Մանսուրը, այդ ջլապինդ

ու քաջառողջ տղամարդի սրտաւմ
ժամ առ ժամ ցասումը լեռնանում
եր Մասիսի նման ու զայրույթն ընդ-
դեմ խանի բորբոքվում եր Իրանի ա-
վազուտներից յեկաղ մըրկի նման...
Այդ բանը շատ լավ գիտեր Սար-
դարը, այդ բանը գիտեյին Փարրաշնե-
րը, այդ պատճառով Մանսուրին իր
յերկու ընկերներով աշխատանքի ելին
գրել ջրանցքի ամենադժվարին մա-
սում, նրանց վրա հսկիչներ ելին
կարգել ամենադաժան Փարրաշներին,
վորոնց խոռոչը հայՀոյանքն եր ու
փաղաքանքը արջառի ջղերից հյու-
սած մտրակի հարվածը...

Եել գիշեր ու ցերեկ առանց հան-
դստի աշխատում ելին հարյուր ու
հարյուր Փահլաները, փորում, բա-
ցում ելին մայր հողի կուրծքը և
ամեն մի բացվածք թրջում ելին
դառն քրտինքով ու արյունով...
Բարկ արեկ տակ մի փարչ ջրով ու
չըրացած հացի կտորներով աշխա-
տում ելին Փահլաները, առանց իմա-

✓

նալու, թե ինչը և ինչո՞ւ համար են
փորում: Գոռցե զա մի ընդարձակ
յերկարավուն գերեզման եր, ուր հե-
տո բոլորը պիտի թաղվեյին. վոչ
վոչ վոչինչ չդիտեր. նրանց համայ-
ված եր այսինչ խորովթյան ու այս-
ինչ լայնության փոքել և նրանք փո-
րում եյին... Հողի շերտերին հաջոր-
դում եյին քարե ամուր զանդիած-
ներ և ֆահլաները լարելով իրենց
սկանները փշրում եյին քարերը,
քրտնում, քթմնջում և դարձյալ ու
դարձյալ փորում:

Հենց առաջին շաբաթը մի տաս-
նյակ ֆահլաներ գտան իրենց գերեզ-
մանը ջրանցքի ափերին. Սարդարը հը-
րամայեց մեռածներին հենց ջրանցքի
ափերին ել թաղել. նա ինչ վոր
շեքիաթում լսել եր, վոր կառուց-
վածքն ամուր և լինում, յերք մարդ-
կային դիակներով են ամրացնում
այդ կառուցվածքի հիմքը և նա կու-
ղեր վոր հնամենի հերթաթը իրակա-
նություն գտանար...

Արարատյան այրող արեվի ներքի
վլատում եյին այդ մարդկային արա-
րածները, ինչպես չնչին միջատ-
ները, սակայն այն տարբերությամբ,
վոր միջատները բնազդով աշխատում
եյին իրենց համար՝ վայելելով իրենց
աշխատանքի պառուղը, իսկ մարդկա-
յին այդ հոծ զանդվածը դաստիարա-
ված եր քրտնելու ու հոգնելու, տանջ
վելու ու տոկալու քմահաճ բռնակալի
համար... Բոնակալ, վոր նրանց
մեջ իսեղգել եր ամեն գրացմունք,
ինչ վոր մարդկային եր, բռնազատել
ամեն արտահայտություն, ինչ վոր
նրանց կարող եր բանական արարա-
ծի տեսք տալ:

Յեկ ահա աշխատանքի յերբորդ ամ-
սում քաջակորովն Մանսուրը, նրա
հետ նաև իրահիմն ու կարապետը
վուխեցին, դարձան կմախքի մի
զանդված, վորոնք ուրվականի պես
ինչ վոր շաբաթումներ եյին անում,
բայց այլևս ուժ չեր մնացել նրանց
մկաններում և վոչ ել նախկին կայ-

նալու, թե ինչը և ինչո՞ւ համար են
փորում: Գուցե դա մի ընդարձակ
յերկարավուն գերեզման եր, ուր հե-
տո բոլորը պիտի թաղվելին. վոչ
վոք վոչինչ չփխեր. նրանց հրամայ-
ված եր այսինչ խորսովթյան ու այս-
ինչ լայնության փորել և նրանք փո-
րում եյին... Հողի շերտերին հաջոր-
դում եյին քարե ամուր դանդաշ-
ներ և ֆահանները լարելով իրենց
սկանները փշրում եյին քարերը,
քրտնում, քրթմնջում և դարձյալ ու
դարձյալ փորում:

Հենց առաջին շաբաթը մի տաս-
նյակ Փահաններ դտան իրենց գերեզ-
մանը ջրանցքի ափերին. Սարդարը հը[✓]
րամայեց մեռածներին հենց ջրանցքի
ափերին ել թաղել. նա ինչ վոր
չեքիաթում լսել եր, վոր կառուց-
վածքն ամուր և լինում, յերբ մարդ-
կային դիմումներով են ամրացնում
այդ կառուցվածքի հիմքը և նա կու-
ղեր վոր հնամենի հեքիաթը իրակա-
նություն դառնար...

Արարատյան այրող արեվի ներքի
վլատում եյին այդ մարդկային արա-
րածները, ինչպես չնչին միջատ-
ները, սակայն այն տարբերությամբ,
վոր միջատները բնազդով աշխատում
եյին իրենց համար՝ վայելելով իրենց
աշխատանքի պառողը, իսկ մարդկա-
յին այդ հոծ զանդվածը դատապարտ-
ված եր քրտնելու ու հոգնելու, տանջ
վելու ու տոկալու քմահաճ բոնակալի
համար... Բոնակալ, վոր նրանց
մեջ խեղդել եր ամեն զգացմունք,
ինչ վոր մարդկային եր, բոնադատել
ամեն արտահայտություն, ինչ վոր
նրանց կարող եր բանական արարա-
ծի տեսք տալ:

Յեկ ահա աշխատանքի յերբորդ ամ-
սում քաջակորովն Մանսուրը, նրա
հետ նաև իբրահիմն ու Կարապետը
վոխավեցին, դարձան կմախքի մի
զանդված, վորոնք ուրվականի պես
ինչ վոր շարժումներ եյին անում,
բայց այլս ուժ չեր մնացել նրանց
մկաններում և վոչ ել նախկին կայ-

տառ արյունը նրանց յերակներում։
Յերբ Մանսուրը նայեց իր շրջապա-
սը, տեսավ, վոր յերեք ամիս առաջ
յեղած Փահլաներից վոչ վոք չեր մը-
նացել. տաժանակիր, քաղցած աշխա-
ռանքը բոլորին վոչնչացրել եր, նը-
րանց հաջորդել ելին նորերը, վո-
րոնց սպասում եր միենույն ճակա-
տագիրը։

Այդ ժամանակն եր ահա, վոր Սար-
դարը, վոր վճռել եր Լաթիֆեյին
կորել զբսի աշխարհից, վորակսղի
այլևս վոչ մի սիրտ չբարախսի նրա
համար, հարցրեց Փարրաչին։

— Թաղեցի՞ք Մանսուրին։

— Վո՛չ, տեր իմ. նա դեռ դիմա-
նում ե։

— Ա՛հ, հասկանում եմ, թե ինչու
գործը դանդաղ ե ընթանում. դուք
թույլ եք տալիս, վոր մարդիկ աղա-
յություն անեն, հա՞յ, հայդե՞՞, դնա
և ամրացրու ջրանցքի ափերը նրա
դիմակով ու այն ժամանակ գործն ա-
րագ կընթանա։

Ու յեկավ Փարրաշը Մանսուրի
մոտ այն ժամանակ, յերբ նա կարո-
տակեզ սրտով քունդը վայր եր դը-
րել ու աչքերն հառել դեպի Սար-
դարի ապարանքի կողմը, ուր թաղ-
ված եր նրա սիրտը, ուր թպրառում
եր նրա սիրելու վանդակիլած սիրտը
և նա կարծես զգում եր այդ թը-
պրոտոցը և դրանից եր, վոր իր սիրտն
ել թպրառում եր . . . Հեռու, Սարդա-
րի կատարից դալիս, կարծես վերակից
առաքված. գալիս եր մի թուխ ամպ
և այդ ամպը թամբած ձիու տեսք
ուներ և թվում եր Մանսուրին, թե
ահա՛, ահա՛ այդ ամպն ավելի ներ-
քեվ կիշնի, ինքը կթոնի այդ ամպի
վրա, կհասնի Սարդարի ապարան-
քին, կիշնի, կվերցնի Լաթիֆեյին՝ ✓
յերկոտով միասին նորից կթոնեն ամ-
պին ու կսավառնեն Հեռու, դեպի ա-
զատություն, ուր խան ու սարդար
չկա, ուր կարելի յե աշխատել, ապ-
րել ու սիրել . . . Հբա՛չք, բայց միթե
հրաշքը խեղճերի համար ե . . . Թեվ

Ահա այլ պահին տեղի ունեցավ ու-
րիշ Հրաշք, Փարբաշը թափով յե-
կալ մերկացրած սուրի հակառակ,
բռնթ կողմով հարվածեց Մանսուրի
մեջին ու դուաց...

— Մանսություն ևս անում հա՞,
կեղտոտ Փահլա;

Մանսուրը վեր թռավ տեղից, չը-
նայած մեջքի սուր ցավին, թվաց թի
ուժ առավ, վերցրեց մի քար ու թա-
փով հարվածեց Փարբաշի զլիին.
Փարբաշն ընկալ ձիուց ու թամրած
ձին խրխնջալով կանգնեց իրա՝ Ման-
սուրի առաջ... Ահա՝ քեզ հրաշք:
Չե՛, իղուր չեր Մանսուրի յերազը.
Մանսուրը փորձ փորձեց թռչել ձիու
մեջքին, սուրալ դեպի ապարանքը,
փախցնել Լաթիքեյին ու դնալ դեպի
ազատություն... Բայց հրաշքը մը-
նաց կիսատ... Փարբաշների մի
այլ խումբ վրա հասավ — մի ըսպե-
յից Մանսուրին իրրե դիակ փռեց
դետնին և նրա կարոտով բաց մնա-
ցած աչքերի առջեկց Արարատից յե-

կող թուիս ամպլը հանգարտ անցավ,
բայց այս անգամ թամբած ձիու կեր-
պարանք չուներ, այլ մի անպարփակ
վիճ եր, ուր կարող ելին տեղափորվել
բուռը Փահլաների դիակները...

Իբրահիմն ու Կարապետը լալով
փոս փորեցին ու Մանսուրին իջեցրին
դերեզման և Կարապետն անլսելի,
ինքն իր համար մըմնջաց.

— Այ Մանսուր, խաղաղություն
հոգուդ, հանգուցյալ մարմին, այ
իմ պատկերակից հողածին: Հալատ-✓
ներս մեկ չեր, սրտներս հո մեկ եր,
մեր ժամը չեյիր դալիս, մեկ յերկնքի
տարկի, մեկ յերկը յերեսի եյիր հո
ինձ հետ կենում, ման դալիս,
տանջվում, աշխատում: Լեզուդ իմը
չէր, պատկերդ, հոգիդ հո խմիցն եր.
մկամ մեկ ցավ չե՞ր, վոր մեզ տան-
ջում եր, մկամ մեկ իշխան չե՞ր, վոր
ինձ ել, քեզ ել գարբեղար արեց,
սերը մեր սրտում մեոցրեց, յերկինք,
արեվ մթնացրեց... Այ իմ պատկե-
րակից հողածին, ընչանք յե՞րբ ես

դոռքի դարդը մեղ երի, փոթոթի,
սաղ սաղ խորովի, ընչանք յե՞րբ...

Ու Կարապետը չեր գտնում իր հար-
ցի պատասխանը...

Ու իբրահիմն ել նույն խոսքերն ա-
սաց մյուս որը, յերբ Կարապետի
դիակով ամրացրեց ջրանցքի ափերը:
Նույն հարցը տվեց ու պատասխան
չդուալ...

Ու յերրորդ որը իբրահիմի դիա-
կով ջրանցքի ափերն ամրացնող
քուրդ Հասոն ել միենույն խոսքերն
ուսաց, միենույն հարցը տվեց և
պատասխանը չդուալ...

Յել այսպես մեռան Մանսուրին ու
իր ընկերները... Յել այսպես իրա-
կանացվեց Սարդարի վաղուցվա լր-
սած հեքիաթը և ջուրը դլդլալեն
թափեց ու լցրեց Լաթիֆեյի հա-
մար պատրաստած ավաղանը...



VI

Յերեկը ճառագայթաձիգ արեվն եր
ցուցլում ավաղանի ջրերում ու գիշե-
ու լուսնի շողերն եյին սրմայի նման
ժապավինում ավաղանն ու շրջապա-
տը:

... Շիրազի բուրյան վարդեր բու-
սան փոքրիկ պաւակում, ու չուշա-
նը բացեց իր թերթերը և մանկան
թարթվող աշխիների պես մեկ մեկ
բացվեցին քրիզանթեմի կոկոնները...
Պտղատու ծառերը փուցին իրենց
տերեվները և այդ տերեւների վրա
ճռվողյունով թառեցին աղավնիներն
ու ճնճղուկը, ծիծառն ու նույնիսկ մի
քանի վարժեցրած սպասակները...

զոռքի դարդը մեղ երի, փաթոթի,
սաղ սաղ խորովի, ընչանք յե՞րբ...

Ու Կարապետը չեր գտնում իր հար-
ցի պատասխանը...

Ու Իբրահիմն ել նույն խոսքերն ա-
սաց մյուս որը, յերբ Կարապետի
դիակով ամրացրեց ջրանցքի ափերը:
Նույն հարցը տվեց ու պատասխան
չդտավ...

Ու յերբորդ որը Իբրահիմի դիա-
կով ջրանցքի ափերն ամրացնող
քուրդ Հասոն ել միևնույն խոսքերն
տաց, միևնույն հարցը տվեց և
պատասխանը չդտավ...

Յեվ այսպես մեռան Մանսուրն ու
իր ընկերները... Յեվ այսպես իրա-
կանացվեց Սարդարի վաղուցվար լը-
սած հեքիաթը և ջուրը գլուխալեն
թափեց ու լցրեց Լաթիֆեյի հա-
մար պատրաստած ավագանը...



VI

Յերեկը ճառագայթաձիւ արեվն եր
ցուցլում ավագանի ջրերում ու գեղե-
ռը լուսնի շողերն ելին սրմայի նման
յապավինում ավագանն ու ըրջապա-
տը:

... Շիրազի բուրյան վարդեր բու-
սան փոքրիկ պուրակամ, ու չուշա-
նը բացեց իր թերթերը և մանկան
թարթկող աչիկների պես մեկ մեկ
րացվեցին քրիզանթեմի կոկոնները...
Պաղատու ծառերը փուցին իրենց
տերեկները և այդ տերևների վրա
ճռվողյունով թառեցին աղավնիներն
ու ճնճղուկը, ծիծառն ու նույնիսկ մի
քանչի վարժեցրած սօխակները...

Բայց այդ ամենի շուրջը կանոնեցին
բարձրաբերձ պարխապներ, վոր ոճն
իր պորտով և ոտար հավքն իր թե-
վով չհամարձակվի ներս թափանցել
այդ վայրը, վոր վոչ մի հողեղեն չը-
տեսնի այդ չքնաղ ավաղանն ու
նույնքան չքնաղ պուրակը, վոր Սար-
դարը պատրաստել տվեց միայն ու
միայն Լաթիֆեյի համար, վորպեսզի
նա զվարձանա ամեն որ և զվարձանա
լով զվարձացնի իրան՝ Սարդարին:

Ու լուսնի պես հեղ և արեի նման
այրող Լաթիֆեն ըրծեց, տեսալ այդ-
ամենն ու մի պահ սքանչացավ այդ ա-
մենի վրա և սոխակը դայլալելով նա-
յում եր Լաթիֆեյին կարծեա ցանկա-
նալով հարցմունք անել, թե վո՞րն է
ավելի գեղեցիկ, արդյոք այդ պուրակն
ու ավազա՞նն են գեղեցկություն տա-
լիս աղջկան, թե աղջիկն ամենին այդ
հարցն իր տալիս յուրովի նաև Սար-
դարը և վոչ վոք գրա պատասխանը
չեր գտնում: Բայց Լաթիֆեյի սըր-
տում ուրախ անկյուն չկար և քիչ հե-

ռու ամեն ինչ մռայլից նրա հա-
մար... արդեն մեկ տարի յեր, վոր
նա Սարդարից, ներքինի Սահիրից ու
մեկ ել իրեն աղախին նշանակված Նի-
շարից բացի ուրիշ վոչ վոքի չեր
տեսնում: Այդպես եր Սարդարի կամ-
քը: Լաթիֆեն սկզբում շատ դիմա-
վրեց Սարդարին, շատ համառեց,
բայց այն բուռն կարուր, վոր նա
ուներ գեպի գուրսը, դեպի ազատ
կյանքը, գեպի իր Մանսուրը հարկա-
վրեց նրան առժամապես համակերպ-
վել ամեն ինչի. իցե թե իր համառու-
թյունը առիթ լիներ, վոր Սարդարը
Մանսուրին վոչնչացներ և իրեն ել
զվաստեր, իսկ ինքն ուզում եր ապ-
րել և առավել ևս ուզում եր, վոր ապ-
րեր Մանսուրը. ու նա խոսք առաջ
Սարդարից, վոր նա խնայի իր հարա
դատների կյանքը, վոր ձեռք չտա-
Մանսուրին և ինքը Սարդարինը կը-
ինի:

Ու Սարդարը խոսք տվեց: Յեկ այդ-
խոսքը Սարդարը տվեց այն որը,

յերբ եր Փարբաշին կարդադրեց, վոր
ջրանցքի ափերն ամրացնի Մանսուրի
դիմակով...

Ի՞նչ իմանար Լաթիֆեն, թե Սար-
դարը, յերկրի տերն ել կարող ե վո-
ղացային սինքորի պես մեկ բան ա-
սել և մեկ ուրիշ բան անել. թող ապ-
րեր Մանսուրը և Լաթիֆեն հաստատ
դիմեր, քանի ապրում ե նա, ուրեմն
ինքն ել իրավունք ունի ապրելու և
վոչ միայն ապրելու, այլև հուսալու
թե ահա մեկ որ Մանսուրը կդա և կա
զատի իրեն, ինչպես իրենից առաջ
յեղած Լաթիֆեյին փախցրել և նրա
սիրածը:

Եեկ ամառային որվա այն պահին,
յերբ արել կրակ եր մաղում չորս
դին, յերբ ամեն արարած փախչում
եր դեպի ստվերը, փոքրիկ պուրա-
կում ավաղանն ու բուրում նավետ ծա-
ղիկները սիռում եյին մեզմ, զուրե-
կան զովություն և Սարդարը Լաթի-
ֆեյի հետ գալիս եր այնտեղ վայելե-
լու հաճույքների հաճույքը, վոր նա

կարդացել եր հեքիաթներում և այ-
սոր իրականություն եր դարձրել:

Ահա, նրանք ներս մտան: Սարդա-
րը հագել ե ճերմակ, թեթև յերկարա-
վուն մի զգեստ, նա զնաց, նստեց
ավաղանի ափին սարքած փոքրիկ տա-
ղավարում, ուր փափուկ թախտին
փոված ոթոցները ծածկված Խորա-
սանի շալով ու Սպահանի քիշմիրով
շոյում եյին նրա ձեռքերը հաճելի
քնքշությամբ: Գալիս ե Լաթիֆեն. մե-
տաքսի նուրբ շրջազդեստի ծալքերի
միջից դժագըվում ե նրա լուսեղեն
յարմինը, նա զլիսահակ ե, բայց աչ-
խատում ե աչքերում վառել կրակը,
կրակը, վորին այնքան տենդորեն
սպասում ե Սարդարը... Ահա՝ Սար-
դարը նշան տվեց... Լաթիֆեն հաս-
կանում ե թե ինչ և ուզում տերը...
Նա վրայից նետում ե մետաքսի շրջա-
զգեստը և այնպես, ինչպես առաջին
կինը յեղեմական դրախտում, այնպես
գայթակղիչ ու կախարդական մի պահ
կանոնում ե Սարդարի դիմաց, ապա

յերբ իր Փարբաշին կարգադրեց, վոր
ջրանցքի արիերն ամրացնի Մանսուրի
դիմակով...

Ի՞նչ իմանար Լաթիֆեն, թե Սար-
դարը, յերկրի տերն ել կարող ե փո-
ղոցային սինլքորի պես մեջ բան ա-
սել և մեկ ուրիշ բան անել. թող աս-
տեր Մանսուրը և Լաթիֆեն հաստատ
դիտեր, քանի ասլրում ե նա, ուրեմն
լնքն ել իրավունք ունի ասլրելու և
վոչ միայն ասլրելու, այլև հուսալու
թե ահա մեկ որ Մանսուրը կդա և կա
զատի իրեն, ինչպես իրենից առաջ
յեղած Լաթիֆեյին փախցրել է նրա
սիրածը:

Յեկը ամառային որվա այն պահին,
յերբ արել կրակ եր մաղում չորս
դին, յերբ ամեն արտրած փախչում
եր դեպի ստվերը, փոքրիկ պուրա-
կում ավազանն ու բուրումնավետ ծա-
ղիկները տիռում եյին մեղմ, դուրե-
կան զովություն և Սարդարը Լաթի-
ֆեյի հետ գալիս եր այնտեղ վայելե-
րու հաճույքների հաճույքը, վոր նա

կարդացել եր հեքիաթներում և այ-
սոր իրականություն եր դարձրել:

Ահա, նրանք ներս մտան: Սարդա-
րը հագել է ճերմակ, թեթև յերկարա-
վուն մի զգեստ, նա գնաց, նստեց
ավազանի ափին սարքած փոքրիկ տա-
դավարում, ուր փափուկ թախտին
ժողոված ոթոցները ծածկված Խորա-
սանի շալով ու Սպահանի քիշմիրով
շոյում եյին նրա ձեռքերը հաճելի
քնքշությամբ: Գալիս ե Լաթիֆեն. մե-
տաքսի նուրբ շրջազգեստի ծալքերի
միջից գծագրվում ե նրա լուսեղեն
մարմինը, նա դլիսահակ է, բայց աշ-
խատում ե աչքերում վառել կրակը,
յերակը, զորին այնքան տենդորեն
սպասում և Սարդարը... Ահա, Սար-
դարը նշան տվեց... Լաթիֆեն հաս-
կանում է թե ինչ ե ուզում տերը...
Նա վրայից նետում է մետաքսի շրջա-
զգեստը և այնպես, ինչպես առաջին
կինը յեղեմական դրախտում, այնպես
դայթակղիչ ու կախարդական մի պահ
կանդնում ե Սարդարի դիմաց, ապա

նրա մարմինը պարուրում և արել
լուսածին շողքը և նա նետվում և ա-
վագանի փրփռեների մեջ.. Նա լո-
դւամ և ինչպես կարապ և ճերմակ
լուսեղեն պարանցը հանելով ջրից
ողորմում և ամբողջ մարմնով ալիք-
ների հետ... ջուրը խոյանքով հետ ու-
սուած և գնում նրա չարժումից...

Մեկ ալիքը ծածկում և նրա իրանը,
մյուսը զարնվում և կողերին, մյուս-
ը կրծքին, ապա հետ գնում նորից ու
նորից իր խաղը սկսելու աղջկա
հետ... Սարդարը նայում է, նայում
անկշտում աչքերով և նորից ու նոր-
րունկում և նրա ներսում ցանկու-
թյան հախուսն կրակը. Այսպես և ա-
հա այս հեքիաթը... փերին իջել և
ջրերի մեջ, խայտում, վոստոտում և
և թվում և թե ջուրն ու ալիքներն ել
տարված են ընության այդ ոքանչելի
ռաւեղծավարծությամբ: Յեվ Սարդա-
րին թվում եր, թե Մարդարեյի խոս-
տացած յերանության այն վայրկյանն
ե, վոր ապրում և ինքը, քանի վո՞ր

դըախտում և վո՞ր Մարդարեյն կա-
րող և ստեղծել այդպիսի կատարելու-
թյուն ինչպիսին Լաթիֆեն եր. Նրա
սքանչելագույն մարմնի վրա չկար և
վաչ մի անկանոն գիծ, չկար և վոչ մի
րիծ, վոր ամենափոքր իսկ չափով նը-
ումացներ նրա տեսքը: Այդ վողորդի
ու ձկուն իրանը, այդ ամուր կլորիկ
ստինքները, վորոնց սպուլները թուլի
իսպողի պես մեկ մեկ բողոս-
չն եյին՝ առեն նայելիս նոր վայլ,
նոր հրապույր եյին ստանում և Սար-
դարը ներքին տաղնապով այլես խան-
դում եր, և' արելին, վոր այնպես
շեշտակի իջնում եր Լաթիֆեյի վրա,
և մանաւանդ ալիքներին, վորոնք այն
ուես պիրկ գրկում եյին իրար և մեկը
մըցում եր մյուսի հետ ավելի առաջ
նետվելու, ավելի ջերմորեն սեղմելու
Լաթիֆեյի իրանը. և ինչ զաժան կրիզ
եւ տեղի ունենում ալիքների մեջ.
ու ալիքների այդ կամի գիմաց Սար-
դարը հանդիսոտ չեր կարող մնալ իր
տեղում: Նա իջավ տաղավարի թախ-

ակց, ձեռքը յերկարեց զետի արվա-
ռանը, բռնեց Լաթիֆեյի հուանի թե-
ղից... վո՛չ, վո՛չ, իրական ե... նա
յե, մարմնավոր աղջիկ և վոչ վոք,
վոչ վոք չի կարող խել նրան իրե-
նից... նա աղջիան դուրս ե քաշում
ավագանից, ջրի կաթիլները բողոս-
ջել են նրա վողջ մարմնին. ամբողջ
բռնմքը, պարանցը, կուրծքը, իրա-
նը ծածկված եր հաս-հաս կաթիլնե-
րով և այդ կաթիլների մեջ չողում
են արեվի ճառագայթները. թվում ե
թե նա զարդարված ե արեահյուս
մարդարիտներով ու Սարդարը յեր-
կարորեն սքանչացած ե այդ տեսարա-
նով. այժմ նրան սպասում ե այլ հա-
ճույք, նա բարակ չղարշը նետում ե
աղջիա վրա, թուցնում ե դեպի իր ա-
պարանքի ընդարձակ գահլիճը, ուր
նույնպես վոչ մի ոտար վոտք չի կո-
խում. Լաթիֆեն մի պահ հանգստա-
նում ե և քիչ հետո դարձյալ վոտքի
վրա յե... բարակ չղարշը դցած ուսե-
րին նա կանգնում ե սենյակի մեջտե-

դր... հետիւց լավում ե մի մեղմ պա-
րի յեղանակ,.. այս անգամ արդեն
Լաթիֆեյի աչքերում իջնում ե խոր
թափսիծ, նա հետ ե զցում վլուխը,
կարոսով նայում ե լուսամթութից
զուրս, ուր միայն անսահման ու ան-
ձայրածիր տարածությունն ե վսաված
ե վոչ վոք, վոչ վոք չի յերեսամ ու
չի կարող յերեալ... նա հետզհետե
րարձրացնում ե թեվերը ու շարժ-
վում ընդարձակ գահլիճում... Նա
պարում ե: Այլպես և այժմ Սարդարի
կամքը... նորից ձկվում ե նրա իրա-
նը, նորից պարանոցը նազանքով իս-
յանում ե վեր, հոլանի թեվերը թա-
փահարում են ամելի արագ և շող
մատներով նա չղարչի ծայրերը ըստ-
նած Փուացնում ե իր շուրջը և այն-
պես թեթև և սահում նրբահյուս վոր-
դերի վրայով, վոր թվում ե թե ահա
նա թռչունների նման թել կառնի,
կոլանա հեռո՞ւն, հեռո՞ւն... Ու ար-
բաւմ ե Լաթիֆեն, պարում ե ջեն-
նաթի պարը,—մտածում ե Սարդարը.

...Յես պարում եմ տանջանքի սկա-
րը, մահվան պարը, — մտածում ե
լաթիֆեն և հետզետե նրա թելերը
կամազուրկ են զանում, հետզետե
իրանը թուլանում ե, պարանոցը խո-
նարհվում ե սեաթույր պայծառ աչ-
քերից ցողում են յերկու կաթիլ ար-
ցոնք... Նա այլևս կանգնում ե իր
տեղում և միայն շղարչն ե, վոր այս
անդամ ակամա Փոռում ե նրա չորս
կողմը և այդ շղարչի արանքից նրա
մարմինը յերմում է ինչպես վարդա-
ջրով ոճված մի նրբին զանդված, վո-
րոց բուրում և բուրմունքների բուր-
մունքը, վորը չի կարող բուրել և վոչ
մի դրախտային ծազիկ, ինչպիսի աս-
ալածային ձեռք ել տնկած լինի
այն... Ու Սարդարն այլևս անհամ-
բեր ցատկում ե տեղից, հետ ե նե-
տում շղարչը, դրկում նրա ճկուն ի-
րանը, կրծքին է առնում նրա դլուխը,
քաշում ե դեպի իր վտակեզոծ մահճա-
կալը ու փակում աչքերը և նրան յե-
րիվում ե գրախորը նոր հրաշալիքնե-
րով, նոր ու անհագուրդ վայելքնե-
րով...

VII

...Սարդարը յելավ դահլիճից հա-
ղոցած յերկրային ջեննաթի, ամենա-
նվիրական ջեննաթի. պարզեռվ ու
յերբ անցավ սրահը, նրան մոտեցավ
ներքինի Սահիբը և խոնարհ գը-
լուխ տալով զեկուցեց.

— Տե՛ր, քիչ առաջ մեռավ Սիմե-
ոսը... յերեք անդամ արևի լույս
հաղթեց և յերեք անդամ ել մերժեցի՝
ոնսալով ձեր իմաստուն խորհրդին:

— Ինձ հետ խոսել միայն վաղ մը-
նացածների մասին, —վորոտաց Սար-
դարը, չցանկանալով ստվերել իր վա-
յելած յերանությունը...

— Մյուս յոթը խանումնեղը նույին-
պես խնդրում են իրենց լույս աշ-
խորհ թողնել... ի՞նչ կը հրամայեն
ձեր սստվածային ըրթունքները...

— Սարդարին ինդրել հարկավոր
չէ. Սարդարը զիտէ ինքն ինչ ժամա-
նակ և հարկավոր:

— Զեր բերանավ ինքն իմաստու-
թյուննե խոսում, տե՛ր, — սստվ Սա-
հիրը ու խոհարհ գլուխ տալով հետ
զնաց:

Վո՞չ, հասակ չունի Սարդարի ցառ-
սումը... վեց և գարձալ վեց ա-
միս թող մնան նրանք առանց արեի,
վոր հասկանան թե ինչ և նշանակում
ըմբուտանալ Սարդարի դեմ, փախչել
ապարանքից: Փախած Լաթիֆեյի փո-
խարեն թող տանջվեն մնացածները և
այն ժամանակ նրանք շա՞տ հնազանդ
կլինեն... Առայժմ Սարդարին բավա-
րում ենոր Լաթիֆեն... և նա վը-
րիժառու եր լինում մյուսներից...

Անցան որեր ու Լաթիֆեն հետք-
հետեւ մոայլում եր ու թախիծը պա-

տում եր նրան, ինչպիս դալկությունը
պատում և աշնան տերեներին...
Որեր, շաբաթներ ու ամիսներ շա-
րունակ նա կրկնում եր նույն արարո-
դությունը Սարդարի համար, ընկ-
նում, ներքին դրանեցով ընկնում նը
բա բաղուկներում և ամեն անդամ ի-
րեն միխթարում նրանով, վոր այդ
բոլորն ինքն անում և միայն ու մի-
այն Մանսուրի համար, վոր մի որ
պիտի զա Մանսուրը ազատի իրեն և
ինքը կազամի այդ տանջալի լո-
կանքից ու պարից և մանավանդ Սար-
դարի մահասարսուռ զգվանքից...
Զրի ալիքների մեջ նա տեսնում եր
հրան՝ Մանսուրին: Յերբ պարելիս
թափահարում եր չլարշը, թվում եր
թե ահա, ահա Մանսուրի հետ թըո-
չնում և սարերով ու ձորերով զեզի
ազատություն և ամեն անդամ Սար-
դարի գրկում միսրճվելով թվում եր
թե զա վերջին տուրքն ե, վոր պիտի
տա ու այլես ազատվի նրանից...
Բայց յեկալ մի որ, վոր այլես այդ

նալլումները նրան չելին բավարարաւ ըում, վոր զարհուրելի դարձալ Սարդարի ստվերն անդամ ու գարշելի ներքինին ու ազախինը, վորոնց միայն իրավունք ուներ նա տեսնել... Արև, իսկական արև և ուղում նա տեսնել, դաշտ, կանաչ ու ծաղիկ, իսկական դաշտ, կանաչ ու ծաղիկ և ուղում տեսնել նա, Զանդուն, իսկական Զանդուն և ուղում տեսնել նա և այդ ամենի հետ իրեն՝ Մանաւրին....

Յել հորդեցին արցունքները վար ու անդադրում, ինչպես հարդում և Զանդուն դարնանը և Լաթիփե յի ներսում բոցավառվեց ազատության կարուր. նա դահլիճի միակ լուսամուտից նայում եր դուքսը. մի պահ գլուխը գուրս հանեց և ներքեւում խորը, շատ խորը, ամենի ժայռերի իորդից հազիր լսելի դարձալ ինչ վոր խշոց. այս՝ Զանդուն եր, Զանդուն, վորը Լաթիփեյին թվում եր թե նույնպես լալիս և, այնքան աղեկը տուր, այնքան խորդից եր դալիս նը-

յա ձայնը, թվում եր թե գետը չընչահեղձ եր լինում... վո՛չ վոք սիրտ չեր անում ապարանքի շրջապատում ման դալ և այդ պատճառով Լաթիփեն վոչ վոքի չել տեսնում... Լաթիփեն հայացքը սկեռեց, նայեց հեռուն և նրան ել, ինչպես վերջին անդամ Մանաւրին, թվաց թե Արարատի կատարից վրթած գալիս և մի թուխ ամպ: Ամպը գալիս և հապճեպով, հալածված հողմից... ահա, ահա! նա մոտեցավ, նա նման է հեքիաթ ներսում վրված կախարդական դորդին... Ահա այդ գորդը կդա, կը փոսի իր լուսամուտի դիմաց. ինքը կթռչի, կնստի կախարդական դորդին. գորդը նրան կփափցնի դեպի այդիները, ինքը հենց գորդի վրայից իմաց կտա Մանաւրին, նա ել կը թռնի կը նստի իր կողքին և իրենք կերթան հեռո՛ւ-հեռո՛ւ կողմեր, ուր ազատ ու ընդարձակ ծովեր ու ցամաքներ կան, ուր Սարդար չկա, ուր կարելի յե սիրել սիրած մարդուն ու

սիրվել սիրված մարդուց . . . Ահա՛,
ահա՛ ամպեղեն գորզը մոռեցավ . . . Հա-
թիփեն պատրաստվում է թռչել տե-
ղեց, բայց այդ պահին մի ձեռք դիպ-
չում է նրա ուսին և կախարդական
դորզը չքանում է. նա հետ է դառ-
նում: Սարդարն է կանգնած նրա դի-
մաց:

— Գնա՛նք, — ասում է Սարդարը,
— Գնա՛նք Լաթիփե, զնա՛նք . . . Յես
յեղա ավաղանում ու պուրակում
և ավաղանն ել, պուրակն ել տխուր
ելին առանց քեզ . . . Գնա՛նք, ալիքները
քեզ են սպասում, զնա՛նք վարդենին
ծաղկել և և առանց քեզ նա հոռ չու-
նի . . .

— Վո՛չ, — բացականչում է Լաթի-
փեն, — յես կուղեմ լողանալ իսկական
Զանկուի մեջ:

— Վո՛չ, դու կլողանաս միայն ինձ
համար և վոչ մի հողեղեն չպիտի տես
նի քեզ:

— Յես կուղեմ լողալ ինձ համար:
— Լաթիփե՛:

— Սարդար, ամենակարող Սար-
դար, ասա ո՞ւր և իմ Մանսուրը . . .
— Ա՛խ, քո Մանսուրը, — ասալ
ու կանգնեց Սարդարը:

Այն որից, յերբ Լաթիփեն յենթարկ-
վել եր իրեն, յերբ ինքը իսոսք եր ու-
վել թե Մանսուրի կյանքին ձեռք չի
տա, Լաթիփեն չեր տվիել Մանսուրի
անունը . . . և թվում եր թե աղջկը
մոռացել է նրան . . . Ա՛հ, ուրեմն,
ի՞նչ, խարուսի՞կ եր, ուրեմն աղ-
ջիկն իր սրովի անկյունում գեռ տեղ
եր պահում նրա համար, վո՛չ, վո՛չ,
Սարդարը հայտնի ամեն ինչ և թող
Լաթիփեն իսպան կարի իր կապը,
թեկուզ սրտի գաղտնի կապը դրսի
հետ և նա ասաց.

— Մանսուրը չի հիշում քեզ այլես:
— Չի կարող պատահել, դու ու-
տում ես:

— Նա չի հիշում քեզ, նրա դիակով
յես ամբացը ջրանցքի ափերը, վո՞ր
ջրանցքն ամուր լինի, վոր ջուրն ան-
խափան դա ու լցվի ավաղանը, ուր

դնւ լողանում ես քո տիրած համար...
— Մանսուրին, դու... ախ, գա-
զան, ստոր խարերա... դե չուտ ասե-
յիր, ել ինչու համար եմ յիս ապ-
ռում... չե՞ վոր այս ամենը նրա
համար եր, ի՞նչ կարող եր ուժ տալ
ինձ դիմադրելու այս տանջանքներին,
քան այն հույսը, վոր մի որ պիտի
տեսնեյի իմ Մանսուրին, լինեյի նրա
հետ, ապրեյի նրա համար...

Յեվ Լաթիֆեն վոստյունով թուալ
դեպի լուսամուտը:

— Կաց, ցնդած, հիմար աղա-
ջիկ...

— Վոչ, յիս հիմա ավելի խեցք
եմ, քան յերբ և ե... ու ցանկացալ
դուրս վաստնել:

— Կաց— մահն և քո առաջ, խե-
լագար :

— Թո՞ղ, կյանքն ե իմ առաջ...
Մեռնե՞լ, այս... Բայց ուզում եմ
մեռնել ազատության մեջ, ուզում եմ
վեր չունչս խառնվի ազատ, քո շնչով
չպղծված ողին... թող իմ դիակը

քրքրեն ցին ու անգղը— բայց Սար-
դարի գարշելի շրթունքները թող չը-
դիպչեն ինձ. թող վոր փտեմ ու հող
դառնամ աղատության մեջ և այդ
հողը թող խառնվի այն հողին, վորի
հետ խառնված ե Մանսուրի փոսած
դիակի հողը, բայց այլիս Սարդարի
ձեռքերը չեն դիպնի ինձ... Հեռո՞ւ...
բության մեջ իմ գերեզմանը շատ և
շատ ընդարձակ կլինի, քան այս
դարշելի գերեզմանը, քան այս կեն-
դանի մեռելների գաղաղը:

Ասավ Լաթիֆեն, իր հոգում կու-
տակած ատելությամբ ու ցասումի
վաղ նորկանքով հրեց Սարդարին ու
միակ լուսամուտից իրեն դուրս նե-
տեց... Ամենի բարձրությունից մին-
չև Զանդուի ձորը մի քանի անգամ
պտույտ գործեց Լաթիֆեյի մարմին
ողի մեջ. նրա մետաքսե զգեստը Փլո-
ւոց նրա չորս բռլորը, ինչպես նրա
յերազած կախարդական գորդը և ա-
պա նա ընկալ ու ջարդվեց ժայռերի
սուրասուր ծայրերի վրա...

Ասում են, վոր Մահմատի ու Լաթի-
ֆեյլ սիրո գաղտնիքն իմացող մար-
դիկ վերջում դասն Լաթիֆեյլ ջարդ-
ված մարմնի մնացորդները և Սար-
դարից ծածուկ, առարան թաղեցին
Մահմատի դիմակի մոտ՝ այն ջրանցքի
ափին, վորը Սարդարը կառացեց ի-
րա՛ Լաթիֆեյլ բռնադատված սերը
վորսալու համար . . .

18 ապրիլի 1935 թ.


Յերևան



ՍԻՐԱՍԻՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍՆԵ

1. ՀԱՐՑՐԵՔ ՆՐԱՆՑ.— Վեպ, 1931 թ.
Մոսկվա, ԽՍՀՄ ժողովուրդների հրատա-
րակություն (սպառված)
2. ԿՅԱՆՔԻ ԿԱՐՈՏԸ.— Վիպակներ, պատմ-
վածքներ: 1934 թ. Յերևան, ՀՍԽՀ Գիտ-
հրատ. գինը 3 ռ:
3. ՄԱՍՄԵՆ ՈՒ ԱՇԵՆ.— Հ. Շավարշի նը-
կարներով, 1934 թ. Գիտհրատ, Յերև-
ան. գինը 1 ռ. Յույնը բրդերեն լեզ-
վով. Գիտհրատ, 1935 թ. գինը 30 կ.:
4. ԼԱՓԻՖԵՆ.— (Արկելյան սեսիլ):





«Ազգային գրադարան



NJ 0363257

55366